կը հիմնե, իսկ Պետական օրացույցներու պատրաստման արհեստանոցին մեջ կը տպագրե առաջին թուրքերեն լրագիրը՝ «Թաքվիմի վեքային» (Դեպքերու օրագիր) 1831-ին և այդ լրագրի հայկական օրինակը հանդիսացող «Լրոյ գիր մեծ ի Տէրութեանն Օսմանեան»-ը 1832-ին։ Պետական արհեստանոցի տառերը կը պատրաստվեին Արապյանի Օրթագյուղի ձուլարանը։ Այս վիճակը տևեց մինչև առաջին սահմանադրության հրուշակումը (1876 թ.)։ Ենիչերիների խռովության ատեն (1826), քաղաքեն հեռու մնալու համար Արապյանը կը հաստատվի Օրթագյուղի Թաշ Մերտիվեն թաղը և այնտեղ կը հիմնե տպարան մը, ուր իր զավակներուն հետ կ՝աշխատի մինչև իր մահը։ Արապյանի մահեն վերջ, իր որդիները՝ Գևորգ, Գալուստ և Սիմոն Արապյան եղբայրները կը շարունակեն իրենց աշխատանքները մինչև տպարանի հրկիզումը՝ 1853 թվականին։ Հըր-

---

օգտակար եղած է ժողովրդին, սակայն պաշտոնյաներու անուշադրության և այլ պատճառներու հետևանքով՝ մաշած, հնացած դաղգյահները, սարքերն ու կազմածները, վերոհիշյալ Արապօղլու Պողոսի և որդիների՝ Գալուստի և Աստուրի ջանքերուն շնորհիվ հիմնովին վերանորոգված են։ Բացատրություն տալու պետք չենք զգար, թե այդ վերանորոգությունը ինչ բազմազան օգուտներ կրնար ապահովել ժողովրդին։ Եթե «նեսիհ» կոչված գեղեցիկ տառերու վիճակը այսպես է, բայց մյուս կողմե հրաման տրված է, որ «թա՝ալիք» գիրերով ալ գրված գիրքերու (մասնավորաբար՝ դիվանական թղթերու և լուսանցքագրություններու ու ծանոթագրություններու) տպագրությունն ալ անհրաժեշտ է։ Այս խնդիրի առնչությամբ ևս տեսակցություն մը տեղի ունեցած է Արապօղլու Պողոսի հետ։ Տեսակցության ընթացքին Արապօղլու Պողոսը հայտնած է, որ պողպատյա «թա՝ալիք» տառերու ձուլման պարտականությունը իրեն հանձնվելու պարագային, կարելի է քանի մը ամսվան ընթացքին «թա՝ալիք» գիրերով գիրքեր տպել։ Ներկայիս գիրքերն այնքան սուղ են, որ գրեթե անկարելի է գտնել, քանի որ Խութանպուլի մեջ պատահած հրդեհներու և մեկ տեղեն մյուսը տեղափոխելու հետևանքով գոյություն ունեցող գիրքերու քանակը շատ նվազած է։ Ատկե զատ անհրաժեշտ է, որ տպարանը ավելցնե իր բանվորներու քանակը և ճոխացնե իր սարքերն ու կազմածները։ Այս կերպով կարելի չէ կասկած հարուցել, որ հրաման տրվելու պարագային, կարելի կ՝ըլլա «նեսիհ» և «թա՝ալիք» տիպի տառերով գիրքեր տպել այնպիսի որակով մը, որ ուրիշ որևէ պետության մեջ իր նմանն ու հավասարը չունենա։ Մանավանդ, որ Արապօղլու Պողոսի նման այս արվեստին քաջա՝մուտ և այժմու նշանավոր քանի մը լեզուներու տառերուն հորինման ճարտարությունը ունեցող մարդիկ, եթե պետության կողմե հովանավորվին, անոնք ալ կը քաջալերվին։ Հետևաբար, «նեսիհ» տառերուն վրա հսկելու և «թա՝ալիք» տառերու ստեղծման համար եթե այդ գործը իր որդիներուն՝ Աստուրին և Գալուստին ևս սորվեցնե, և անոնք ալ այդ գործը սորվիլը հանձն առնել երաշխավորեն, տպագրական արվեստին ծառայությունեն ամենվին չհեռանան և հավատարմորեն ու ճշտապահությամբ ծառայեն, ինչպես ուրիշներու, արժե անոնց առանձնաշնորհ տալ»։

ԿԵՍԻ
ՍԵՅՅԻՏ ԱՊՏՈՒՐՐԱՀԻՄ ՄՈՒՀԻՊ